

## ԿԱՍԻՌՈՒ ԼԵՌՆԸ

Աշնան վերջին օրերն էին: Բերքահաւասարից յետոյ մարդիկ պատրաստութիւն էին տեսնում դիմագրաւելու ցրտաշունչ ձմեռը: Թէեւ արեւը դեռ շողում էր, սակայն նրա ջերմութիւնը չափազանց նուազել էր, իսկ փայլն էլ կորցրել էր իր երիտասարդական բարմութիւնը: Օրերը կարենացել էին:

Հայրս աշխատանիք գնալուց առ աջ շուրջ խնդրեց, եւ մայրս մեր տան արծարափայլ բարը ջրով լցրեց ու տուեց նրան, որից մի ժիշտ ըմպելուց յետոյ՝ ասաց.

- Զուրն իր համը փոխել է, Կասիոսի կատարին անպայման ծիւն է իշել: Անմիջապէս դուրս ելայ նայելու Կասիոսի գագարին, եւ իրօֆ այնտեղ գիշերով ծիւն էր իշել: Տեսարանը հոյակապ էր: Արեւի հետ միասնամակ փայլում էր ալեհեր Կասիոսը՝ նորահարսի պէս սպիտակ քողով պենազարդուած, բայց ցրտաշունչ ու մենակ:

Գարնան ճնհալին դարձեալ երեւում էր նրա լերկ ու վրանաձեւ գագարը, մինչ նրա դալարագեղ լանջերին յորդում էր վերանորոգ ու ցնծալից կեանքը՝ գունագեղ ծաղիկների հազարաբնոյր հրապոյը ներով պսակուած ու բոչունների բաղդրահնչին մեղեդիներով նոխացած:

Երբեմն նրա գագարը ամրողովին կորչում էր մառախուղի կամ թխպոտ ամպերի մէջ: Այնուհետև անձրեւն սկսում էր մաղել՝ յորիհաւոր եւ ախորժալուր մի շրջիւնով: Մէկէն լսում էր ամպրոպի ահեղաշունչ ձայնը, շանթեր էին փայլատակում նրա բարձունքներում, անձրեւը դառնում էր տեղատարափ: Փայլատակումներն աւելի սարսափազդու էին յատկապէս գիշերով,

երբ խոր մրութեան միջից մի ակնքարը լուսաւորում էր լեռան կատարը, իսկ որոտի ձայնից էլ դղրդում էր երկիրը, մինչ շանթերը բեկանւում էին Կասիոսի կողից դուրս ցցուած մի անմատչելի ժայռազանգուածի պոռնգին, որը գիւղացիների կողմից կոչւում էր Կայծակի սար, որից ներքեւ բացւում էր մի անդնդախոր կիրճ՝ շտեմարան մոլեգնող բամիների:

Կայծակի սարից ոչ հեռու հայ գիւղացիք մի ուխտատեղի ունեին՝ Բալում անունով: Նրանից մի ժիշտ ներքեւ կար սառնորակ ջրով մի զուալ աղրիր: Այսօր թէ՛ այդ ուխտատեղին եւ թէ՛ Կասիոս լեռը մնում են սահմանից այն կողմ, այդուհանդերձ նրանց անմահական ու բաղցրայուշ տեսքին ոչ մի բիրս ուժ չի կարող վարագոյր բաշել:

Տիրահոչակ սահմանից այս կողմ հէնց որ աչք բացեցինք՝ մեր հայեցքը դիպաւ Կասիոսի նաղատ գագարին, որ կարծես թէ մի դարաւոր ու խորիդաւոր պատգամ ունէր մեզ հաղորդելու: Այնուհետև մեր մեծերից յանախ լսում էինք, որ այդ լեռան բարձունքներում գտնուել են բազմարիւ հնութիւններ, որ այնտեղ է փորձել Արքահամը զոհել իր որդուն աստծուն, որ այնտեղ են հաւաքում դիւցազունների ոգինները ու ժողովներ գումարում՝ որոշելու աշխարհի ճակատագիրը, որ Բալլումի մօսունք հոսող աղրիրի ջուրը բուժիչ յատկութիւն ունի եւ նրանից խմողը էլ ուրիշ ջրի համը չի զգայ: Եւ, իսկապէս էլ, մեծահասակ մարդիկ կարօտն էին բաշում այդ սրբազան աղրիրի ախորժահամ ջրի:

Կասիոսի շուրջը որը գտնուող գիւղերն ու աւանները ամրողութեամբ

կանաչապատ են, մինչդեռ ինքը՝ լեռը, բոլորովին լերկ, այն աստիճան, որ այսօր արարմերը այն կոչում են Զերէլ էլ-Ակրա, այսինքն՝ Ճաղատ լեռ։ Ժամանակին նրա գագարից կրակ է ժայթել եւ հրաշէկ լաւաները հոսել են նրա կողերն ի վար՝ ձեւաւորելով նրա այսօրուայ բնանկարը։

Մեզանից համարեայ չորս հազար տարի առաջ Հայաստանի եւ Զագրոշեան լեռների կողմերից եկած ու Միջագետքում բնակութիւն հաստատած խորրիները վերոյիշեալ լեռը կոչել են Քազզի կամ Խազզի, որից գալիս է լատինացած Կասիոս անունը՝ հռոմէացիների տիրապետութեան ժամանակից։ Հիւսոսները Ն.Ք. ԺՂ դարում Սիրիայից գնալով՝ գրաւել են եգիպտոսը եւ իրենց հետ են տարել ոչ միայն փիւնիկեան աստուածների պաշտամունքը, այլեւ Քազզի լերան անունը, որն հետագայում եգիպտացիների կողմից աղաւաղուելով՝ դարձել է Քասավ, որից մեծ հաւանականութեամբ ժագում է Կասիոսի լանջին գտնուող այսօրուայ Քեսար գիւղի անուանումը, քանի որ «վ» եւ «բ» տառերը հնչիւնային առումով իրար լծորդ են։

Փիւնիկեցիները Կասիոս լեռը անուանել են Սափոն կամ Սափունու, որը Հին Կտակարանում հանդէս է գալիս Ցեփոն անունով (տե՛ս Ելից ԺԴ, 1-3, Թիւք ԼԳ, 6, ուր Բահալ-Ցեփոնը գրաբարում նշուել է իրրեւ Բեհելսփոն)։

Սափոն լեռը կամ Կասիոսը եղել է փիւնիկ-քանանական Բահալ (Բահաղ) աստծոյ նստավայրը, որի համար էլ այդ աստուածը կոչուել է Բահալ-Սափոն՝ ի տարրերութիւն Բահալ-Հադադի կամ Բահալ-Կարմելոսի։ Այս վերջինը հրեաների պաշտած Աստծու՝ Եհովայի մրցակիցն է եղել՝ որի ժուրմերի դէմ ուժեղ պայման է մղել Եղիա մարգարէն։

Բահալ նշանակում է տէր կամ սեփականատէր, իսկ Բահալ-Սափոն՝ տէր հիւսիսի, քանզի Կասիոսը Պաղ եստինի հիւսիսում է։ Բահալ-Սափոնը եղել է նաև Կասիոսի ստորոտում գտնուող հոչակաւոր Ուգարիտ քաղաքի (Մաս էլ Շամրա) պաշտպան աստուածը՝ փոխարինելով էլ աստծուն։ Բահալը Բարելոնում եւ Պալմիրայում կոչուել է Բէլ, որն աֆաղերէն նոյնպէս նշանակում է տէր։ Նա հանդէս է եկել իրրեւ ամպրոպի ու պտղաբերութեան աստուած։

Բահալ-Սափոնը համեմատուել է յունական Զեւսի կամ հռոմէական Յուպիտերի հետ, իսկ Սափոնը կամ կամ Կասիոս լեռը նոյն արժէքն է ունեցել ինչ որ Օլիմպոսը՝ յոյների համար, իրրեւ Զեւսի եւ այլ աստուածների բնակավայր։ Այդ պատճառով էլ Կասիոսի լանջին գտնուող գեղատեսիկ վայրը կոչուել է Բահալիմ կամ Բահալում՝ իրրեւ օթեւան բոլոր աստուածների, որն այսօր յայտնի է Բալլում անունով։

Աւանդապատումները եւ Ուգարիտում յայտնաբերուած տեխստերը խօսում են Կասիոսի գագարին իր բնակավայրն հաստատած Բահալի կառուցած շենք ապարանքի մասին։ Այնուհետեւ այնտեղ տեղի է ունենում մի կատաղի պայման, մի արիւնալի բախում Բահալի եւ Մովքի միջեւ։ Վերջինս փիւնիկեցիների անբերիխութեան, երաշտի ու մահուան աստուածն էր՝ տէրը ստորերկրեայ աշխարհի կամ «դիակների հաւաքավայրի»։ Նա քէեւ եղրայրն էր Բահալի, քայլ զայրացել էր նրա դէմ, քանի որ այս վերջինը ժառանգել էր բարձրագոյն աստծոյ՝ էլի արոռը։

Բահալի եւ Մովքի զէնքերի շաշիւնից երկրաշարժ է տեղի ունենում,

Սափոնայի բարձունքներից ժայռաբեկությանը են պոկտում ու ցած գլորուելով՝ բլուրներ կազմում, կիրճեր են գոյանում ու յաճախ լցում ծովի ջրով։ Կատաղում է նաև ծովի աստուած եամբ։

Ի վերջոյ Մովքին յաջողւում է սպանել Բահալին։ Դրա վրայ Անտա աստուածուին, որը բոյրն էր Բահալի, արդար վրէժինդրութեան կրակով բորբոքուած՝ իշխում է ստորերկրեայ աշխարհ, գտնում է Մովքին եւ իր սրով կտրատում նրա մարմինը։ Մովքի ոչնչացումից անմիջապէս յետոյ՝ Բահալի յարութիւն է առնում ու վերստին յայտննում կասիոսի վրայ։ Նրան այնուհետեւ սկսում են կոչել՝ «անպարտելի տէր Սափոնի», իսկ կասիոս լեռն էլ դրանից յետոյ նկատի է առնուում իրքեւ «Յաղթանակի բարձունք»։

Այս բոլորից յետոյ, հիմա առաւել եւս հասկանալի է, թէ կասիոսի հիմասքանչ ու կախարդական գեղեցկութիւնը ըմբոշխնած մեր տարեց գիւղացիները ինչպիսի՛ կարօտով էին նայում նրա խորհրդաւոր գագարին։ Իսկ նրանք, ովքեր խմել էին Բալլումի մօտակայքից բխող սառնորակ աղրիւրի ժաղցրահամ ջրից, պատահում էր, որ իրենց մահուան պահին բռւոն ցանկութիւն ունենային մի վերջին անգամ ըմպելու նրանից, այդպիսով մարելու իրենց կարօտը եւ հովացած սրտով բաժանուելու այս աշխարհից, բայց այդ անիծեալ սահմանը արգելվ էր մարդկային այդ նուիրական փափաքի յագեցմանը....

Այս պահին միտքս ընկաւ վանեցի Ասանէքը, բող Աստուած ողորմի հոգուն,

որն իր պաշտելի ծննդավայրից տասնեակ հազարաւոր կիլոմետր հեռու, մահուանից առաջ, հոգեվարքի ժամանակ, Արտամետի խնձոր էր ուզում կամ մի քաս ջուր՝ Ապարանցան աղրիւրից։ Համարեայ ոչ ոք չէր հասկանում նրա ուզածի իմաստը, մինչ ես, լինելով նոյնպէս վտարանդի, լաւ էի ըմբռնում խեղն Ասանէքի ապրած տագնապը։

Գալով ինձ, եթէ պատահի, որ այս հեռաւոր եւ օտարամերժ (այն դէպենում, երբ ցանկանաս պահել ազգային մշակոյրդ եւ ինքնուրիւնդ) ափերում գտնեմ իմ վախճանը, պիտի ուզէի կենացս գէք վերջին պահին մտքով գնալ-հասնել այնտեղ, ուր եղել է իմ ծննդավայրը, ուր անցել է իմ մանկութիւնը, որ այն երանական օրերին բնուրիւնը սուրբ էր եւ անարատ։ Կ'ուզենայի վերջին անգամ նայել կասիոսի ծիւնապատ գագարին, որպէս զի հովացնեմ կարօտակէզ սիրտս։ Իսկ եթէ կենացս այդ վերջին պահը համընկնի ծննդալին, կ'ուզենայի տեսնել մեր գիւղի արեւածագը, երբ արեգակի առաջին ճառագայքները դիպչում են կասիոսին եւ կարմիր գոյնով ներկում նրա դարաւոր գագարը՝ ինձ յիշեցնելով Բահալի ու Մովքի արիւնալի բախումը, երբ ծիւնի նօսրացող սպիտակ շերտերը վերածում են արեան վտակների։ Իսկ ես հիմակուանից արդէն զգում եմ Մովքի պարտութիւնը։ Որքան պիտի ուզէի ըմբոշխնել այդ տեսարանը։ Մովքը՝ մարդկութեան այդ անխիղն ոսոփիր, ծնկի եկած ու պարտուած յաւիտեան....

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՈՒԽԵԱՆ